ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Առևտրի և ինտեգրացիայի վարչությունը /այսուհետ՝ Վարչություն/ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:
2. Վարչությունը իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով, նախարարության կանոնադրությամբ, նախարարի և գլխավոր քարտուղարի հրամաններով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:
3. Վարչությունն իր իրավասությունների շրջանակներում պատասխանատվություն է կրում իր վրա դրված խնդիրների և գործառույթների ժամանակին և պատշաճ իրականացման համար:
4. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Նախարարը՝ Նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով վարչության պետի և ոլորտը համակարգող նախարարի տեղակալի հետ:
5. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են վարչության պետը և վարչության բաժինները:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

6. Վարչության հիմնական խնդիրներն են՝

1) առևտրի խթանման համար բարենպաստ պայմանների ձևավորումը և զարգացած շուկաներին ինտեգրման ապահովումը,

2) իր իրավասության շրջանակներում Եվրասիական տնտեսական միության և Անկախ պետությունների համագործակցության հետ Հայաստանի Հանրապետության տնտեսական հարաբերությունների, ինչպես նաև դրանցից բխող միջոլորտային բարեփոխումների համադրումը և համակարգումը:

7. Վարչության հիմնական նպատակներն են՝

1) իր իրավասության շրջանակներում Անկախ պետությունների համագործակցության և Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության նպատակով համապատասխան իրավապայմանագրային դաշտի ստեղծումը,

2) իր իրավասության շրջանակներում առևտրի, սակագնային և ոչ սակագնային կարգավորման համապատասխան իրավապայմանագրային դաշտի ստեղծումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Վարչությունն իր նպատակների և խնդիրների իրագործման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իրականացնում է միջազգային /տարածաշրջանային/ տնտեսական կառույցների և միությունների հետ համագործակցության աշխատանքներ,

2) մշակում է միջազգային տնտեսական ինտեգրման քաղաքականությունը և իրականացնում վերջինիս կարգավորման աշխատանքները,

3) իրականացնում է միջազգային տնտեսության մեջ Հայաստանի Հանրապետության ինտեգրման գործընթացին աջակցության աշխատանքներ,

4) իրականացնում է միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ,

5) իր իրավասության շրջանակներում իրականացնում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության աշխատանքները,

6) իր իրավասության շրջանակներում իրականացնում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ աշխատանքները,

7) իրականացնում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայում և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդում քննարկվող հարցերի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշման ձևավորումը և ներկայացումը,

8) իրականացնում է Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի և Եվրասիական Միջկառավարական խորհրդի օրակարգում քննարկվող հարցերի վերաբերյալ նախարարության դիրքորոշման ձևավորումը և ներկայացումը,

9) կազմակերպում է Եվրասիական տնտեսական միության մասին Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասով ԵԱՏՄ անդամ պետությունների միջև քննարկումները՝ ձևավորելով և ներկայացնելով հայկական կողմի դիրքորոշումը,

10) մշակում և իրականացնում է Եվրասիական տնտեսական ինտեգրման զարգացման ռազմավարական ուղղությունների վերաբերյալ միջոցառումները,

11) Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում մշակում և իրականացնում է առևտրային քաղաքականությունը, մասնավորապես՝ երրորդ երկրների հետ ազատ առևտրի գոտու ստեղծման և առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագրերը և հուշագրերը և դրանցից բխող միջոցառումները,

12) իրականացնում է երրորդ երկրների հետ ազատ առևտրի գոտու ստեղծման համաձայնագրերի նախագծերում ընդգրկված յուրաքանչյուր բաժնի մասով /համապատասխան գերատեսչությունների հետ համատեղ/ ԵԱՏՄ անդամ պետությունների միջև քննարկումների կազմակերպումը և համակարգումը,

13) մասնակցում է ազատ առևտրի գոտու ստեղծման համաձայնագրերի բանակցային փուլերին և վերջիններիս ընթացքում բարձրացված հարցերի մասով ներկայացնում է հայկական կողմի դիրքորոշումը,

14) Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում իրականացնում է ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների կիրառման քաղաքականությունը,

15) Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում իրականացնում է ներքին շուկայի գործառնության շրջանակներում

Եվրասիական տնտեսական միության խոչընդոտների, սահմանափակումների և արգելքների բացահայտմանը և վերացմանն ուղղված միջոցառումներ,

16) վարում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում, ինչպես նաև երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների ռեեստրը, ինչպես նաև ձևավորում նշված խոչընդոտների վերացման ուղղությամբ ճանապարհային քարտեզը,

17) Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում վարում է պետական և մունիցիպալ գնումների ազգային ռեեստրը,

18) մշակում է առաջարկություններ Հայաստանի Հանրապետության համար արտոնյալ և/կամ բարենպաստ առևտրային ռեժիմ ունեցող շուկաների մուտքի առկա խոչընդոտների վերացման, մուտքի հնարավորությունների ընդլայնման և հայրենական ապրանքները արտերկրի հեռանկարային շուկաներում ներկայացնելուն ուղղված միջոցառումների իրականացման ուղղությամբ,

19) ապահովում է ապրանքների ծագման երկրի որոշման միասնական քաղաքականության իրականացումը,

20) ԱՊՀ համագործակցության շրջանակներում մշակում և իրականացնում է առևտրային քաղաքականության, մասնավորապես՝ «Ազատ առևտրի գոտու մասին» Պայմանագրից բխող միջոցառումների մշակում և իրականացում,

21) ԱՊՀ համագործակցության շրջանակներում մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության մրցունակ ապրանքների ցանկի տրամադրումը,

22) ԱՊՀ համագործակցության շրջանակներում իրականացնում է արտադրանքի կարևորագույն ապրանքատեսակների արտադրության, սպառման, ներմուծման և արտահանման կանխատեսումային ցուցանիշների տրամադրումը,

23) իրականացնում է առևտրատնտեսական համագործակցության ընդլայնմանն ուղղված Արտոնությունների ընդհանրացված համակարգի կիրառման հետ կապված միջոցառումները,

24) մշակում է կնքված ազատ առևտրի մասին համաձայնագրերի, ինչպես նաև ԵԱՏՄ անդամակցության պայմանագրից բխող պարտավորությունների

շրջանակներում մի շարք ապրանքատեսակների մասով արտոնյալ դրույքաչափերի կիրառման ընթացակարգերը,

25) մշակում ու իրականացնում է սակագնային և ոչ սակագնային կարգավորման ոլորտում «պետություն-մասնավոր հատված» համագործակցության միջոցառումները,

26) իրականացնում է սակագնային և ոչ սակագնային կարգավորմանն ուղղված միջոցառումների մշակումը և Եվրասիական տնտեսական միության չափանիշներին համապատասխանեցումը,

27) իրականացնում է ՀՀ տնտեսական զարգացման խնդիրներով պայմանավորված՝ առանձին ապրանքների արտահանման արգելման կամ քանակական սահմանափակումների ուղղությամբ քաղաքականությունը,

28) իրականացնում է երրորդ երկրներից ՀՀ- ից արտահանման և երրորդ երկրներից ՀՀ ներմուծման քվոտավորման մեխանիզմի ներդրման աշխատանքները,

29) իրականացնում է ՀՀ համար զգայուն, ինչպես նաև արտահանման մեծ ներուժ ունեցող ապրանքների ցանկերի մշակման աշխատանքները՝ ելնելով երրորդ երկրների շուկաների առանձնահատկություններից,

30) մշակում է սակագնային, ոչ սակագնային կարգավորման ոլորտում առանձին տեսակի ապրանքների ցանկը և վերջինիս ուղղությամբ մաքսատուրքի դրույքաչափերի կամ ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման առնչությամբ համապատասխան իրավական ակտերը և վարում բանակցություններ ԵԱՏՄ անդամ պետությունների հետ,

31) մշակում է Հայաստանի համար թիրախային շուկաներում գործող ներմուծման ընթացակարգերի վերաբերյալ հուշաթերթիկներ և ապահովում տեղեկատվական ամբողջական հասանելիությունը,

32) մշակում է առևտրի քաղաքականությունը և իրականացնում է դրա դիտանցումը,

33) Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում համակարգում է թվային առևտրի ներդրման և իրականացման աշխատանքները,

34)մշակում է էլեկտրոնային առևտրի կիրառման առնչությամբ համապատասխան իրավական ակտերը և իրականացում դրանից բխող միջոցառումները,

35) Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում իրականացնում և համակարգում է նավթի և նավթամթերքի միասնական շուկայի ձևավորման աշխատանքները,

36) Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում իրականացնում և համակարգում է ալկոհոլային միասնական շուկայի ձևավորման աշխատանքները:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

9. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից.

1) ԵԱՏՄ և ԱՊՀ համագործակցության բաժին,

2) Սակագնային և ոչ սակագնային կարգավորման բաժին,

3) Առևտրի կարգավորումների բաժին:

10. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

V.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

11. **ԵԱՏՄ և ԱՊՀ համագործակցության բաժնի հիմնական գործառույթներն են.**

1) իրականացնում է միջազգային /տարածաշրջանային/ տնտեսական կառույցների և միությունների հետ համագործակցության աշխատանքները,

2) մշակում է միջազգային տնտեսական ինտեգրման քաղաքականությունը և իրականացնում վերջինիս կարգավորման աշխատանքները,

3) իրականացնում է միջազգային տնտեսության մեջ Հայաստանի Հանրապետության ինտեգրման գործընթացին աջակցության աշխատանքները,

4) իրականացնում է միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացմանն ուղղված աշխատանքները,

5) իր իրավասության շրջանակներում իրականացնում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության աշխատանքները,

6) իր իրավասության շրջանակներում իրականացնում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ աշխատանքները,

7) իրականացնում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայում և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդում քննարկվող հարցերի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշման ձևավորումը և ներկայացումը,

8) իրականացնում է Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի և Եվրասիական Միջկառավարական խորհրդի օրակարգում քննարկվող հարցերի վերաբերյալ նախարարության դիրքորոշման ձևավորումը և ներկայացումը,

9) կազմակերպում է Եվրասիական տնտեսական միության մասին Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասով ԵԱՏՄ անդամ պետությունների միջև քննարկումները՝ ձևավորելով և ներկայացնելով հայկական կողմի դիրքորոշումը,

10) մշակում և իրականացնում է Եվրասիական տնտեսական ինտեգրման զարգացման ռազմավարական ուղղությունների վերաբերյալ միջոցառումները,

11)Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում մշակում և իրականացնում է առևտրային քաղաքականությունը, մասնավորապես՝ երրորդ երկրների հետ ազատ առևտրի գոտու ստեղծման և առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագրերը և հուշագրերը և դրանցից բխող միջոցառումները,

12) իրականացնում է երրորդ երկրների հետ ազատ առևտրի գոտու ստեղծման համաձայնագրերի նախագծերում ընդգրկված յուրաքանչյուր բաժնի մասով /համապատասխան գերատեսչությունների հետ համատեղ/ ԵԱՏՄ անդամ պետությունների միջև քննարկումների կազմակերպում և համակարգում,

13) մասնակցում է ազատ առևտրի գոտու ստեղծման համաձայնագրերի բանակցային փուլերին և վերջիններիս ընթացքում բարձրացված հարցերի մասով ներկայացնում է հայկական կողմի դիրքորոշումը,

14) Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում իրականացնում է ներքին շուկայի գործառնության շրջանակներում

Եվրասիական տնտեսական միության խոչընդոտների, սահմանափակումների և արգելքների բացահայտմանը և վերացմանն ուղղված միջոցառումներ,

15) ԱՊՀ համագործակցության շրջանակներում մշակում և իրականացնում է առևտրային քաղաքականության, մասնավորապես՝ «Ազատ առևտրի գոտու մասին» Պայմանագրից բխող միջոցառումների մշակում և իրականացում,

16) ԱՊՀ համագործակցության շրջանակներում մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության մրցունակ ապրանքների ցանկի տրամադրում,

17) ԱՊՀ համագործակցության շրջանակներում իրականացնում է արտադրանքի կարևորագույն ապրանքատեսակների արտադրության, սպառման, ներմուծման և արտահանման կանխատեսումային ցուցանիշների տրամադրում,

18) Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում իրականացնում և համակարգում է նավթի և նավթամթերքի միասնական շուկայի ձևավորման աշխատանքները,

19) Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում իրականացնում և համակարգում է ալկոհոլային միասնական շուկայի ձևավորման աշխատանքները:

12. **Սակագնային և ոչ սակագնային կարգավորման բաժնի հիմնական գործառույթներն են.**

1) իրականացնում է սակագնային և ոչ սակագնային կարգավորմանն ուղղված միջոցառումների մշակում և Եվրասիական տնտեսական միության չափանիշներին համապատասխանեցում,

2) իրականացնում է ՀՀ տնտեսական զարգացման խնդիրներով պայմանավորված՝ առանձին ապրանքների արտահանման արգելման կամ քանակական սահմանափակումների ուղղությամբ քաղաքականությունը,

3) մշակում է կնքված ազատ առևտրի մասին համաձայնագրերի, ինչպես նաև ԵԱՏՄ անդամակցության պայմանագրից բխող պարտավորությունների շրջանակներում մի շարք ապրանքատեսակների մասով արտոնյալ դրույքաչափերի կիրառման ընթացակարգերը,

4) մշակում ու իրականացնում է սակագնային և ոչ սակագնային կարգավորման ոլորտում «պետություն-մասնավոր հատված» համագործակցության միջոցառումներ,

5) իրականացնում է ՀՀ համար զգայուն, ինչպես նաև արտահանման մեծ ներուժ ունեցող ապրանքների ցանկերի մշակման աշխատանքներ՝ ելնելով երրորդ երկրների շուկաների առանձնահատկություններից,

6) իրականացնում է երրորդ երկրներից ՀՀ-ից արտահանման և երրորդ երկրներից ՀՀ ներմուծման քվոտավորման մեխանիզմի ներդրման աշխատանքները,

7) մշակում է սակագնային, ոչ սակագնային կարգավորման ոլորտում առանձին տեսակի ապրանքների ցանկը և վերջինիս ուղղությամբ մաքսատուրքի դրույքաչափերի կամ ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման առնչությամբ համապատասխան իրավական ակտերը և այդ ուղղությամբ վարում բանակցություններ ԵԱՏՄ անդամ պետությունների հետ,

8) Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում իրականացնում է ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների կիրառման քաղաքականությունը,

9) ապահովում է ապրանքների ծագման երկրի որոշման միասնական քաղաքականության իրականացումը:

13. **Առևտրի կարգավորումների բաժնի հիմնական գործառույթներն են.**

1) մշակում է Հայաստանի համար թիրախային շուկաներում գործող ներմուծման ընթացակարգերի վերաբերյալ հուշաթերթիկներ և ապահովում տեղեկատվական ամբողջական հասանելիությունը,

2) մշակում է առևտրի քաղաքականությունը և իրականացնում է դրա դիտանցումը,

3) վարում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում, ինչպես նաև երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների ռեեստրը, ինչպես նաև ձևավորում նշված խոչընդոտների վերացման ուղղությամբ ճանապարհային քարտեզը,

4) Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում վարում է պետական և մունիցիպալ գնումների մասով ազգային ռեեստրը,

5) մշակում է առաջարկություններ Հայաստանի Հանրապետության համար արտոնյալ և/կամ բարենպաստ առևտրային ռեժիմ ունեցող շուկաների մուտքի առկա խոչընդոտների վերացման, մուտքի հնարավորությունների ընդլայնման և հայրենական ապրանքները արտերկրի հեռանկարային շուկաներում ներկայացնելուն ուղղված միջոցառումների իրականացման ուղղությամբ,

6) իրականացնում է առևտրատնտեսական համագործակցության ընդլայնմանն ուղղված Արտոնությունների ընդհանրացված համակարգի կիրառման հետ կապված միջոցառումներ,

7) Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում համակարգում է թվային առևտրի ներդրման և իրականացման աշխատանքները,

8) մշակում է էլեկտրոնային առևտրի կիրառման առնչությամբ համապատասխան իրավական ակտերը և իրականացում դրանից բխող միջոցառումները:

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

14. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:

15. Վարչության պետը՝ ենթակա և հաշվետու է նախարարին, անմիջական հաշվետու է ոլորտը կարգավորող նախարարի տեղակալին և նախարարության գլխավոր քարտուղարին:

16. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության բաժնի պետերից մեկը՝ վարչության պետի ներկայացմամբ:

17. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում նրան փոխարինողի կողմից:

18. Վարչության բաժինները ղեկավարում են բաժնի պետերը:

19. Բաժնի պետերն անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության պետին:

20. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

21. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:

22. Վարչությունը՝

1) իր իրավասության շրջանակներում կազմակերպում և իրականացնում է աշխատանքներ՝ համագործակցելով Նախարարության այլ ստորաբաժանումների, ՀՀ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ,

2) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ՀՀ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համագործակցելով, նախապատրաստում է Վարչության գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծեր,

3) Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրին համապատասխան հաստատման է ներկայացնում Վարչության ծրագրերը, ինչպես նաև ապահովում է դրանց կատարումը: